Ծառայությունների վերակնքման, «Ավտովերակնքման» պայմաններ

Ծառայությունների վերակնքման պայմաններ

Իմ բջջային հեռախոսահամարից ուղարկելով «Այո» բառը 5009 կարճ համարին ՝ հաստատում եմ, որ միանում եմ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մատուցվող կամ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հիբրիդ Սոլյուշնս» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող Ծառայություններին մեկ տարի պարտադիր բաժանորդագրությամբ, այդ թվում միանում եմ նաև «Ավտովերակնքում» Ծառայության պայմաններին: Ծառայություններին մեկ տարի պարտադիր բաժանորդագրության պայմաններն իմ կողմից կարդացվել են և ես չունեմ որևէ առարկություն դրանց վերաբերյալ:

«Ավտովերակնքում» ծառայության պայմաններ

1. «Ավտովերակնքում» ծառայությունը ՝ Ֆիզիկական անձանց մատուցվող «Wi-Fly տարեկան» և «All in տարեկան» ծառայությունների/սակագնային փաթեթներին և (1 (մեկ) տարով) ավտոմատ վերակնքման ծառայություն է:

2. Բաժանորդը, միանալով «All in տարեկան» և «Wi-Fly տարեկան» ծառայությունների/սակագնային փաթեթներին 1 տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) շարունակ օգտվել իր կողմից ընտրված «All in տարեկան» և «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներից, ինչպես նաև ավտոմատ համաձայնում է իր պայմանագրի ավտոմատ վերակնքմանը ևս 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) ժամկետով: Այսինքն, 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) անց, Բաժանորդի պայմանագիրը վերակնքվում է ևս 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր

վաթսունհինգ) օր) պարտադիր ժամկետով և Բաժանորդը շարունակում է ստանալ տարեկան բաժանորդագրության պայմաններով նախատեսված մատուցվող Ծառայությունների առավելությունները:

3. Բաժանորդը կարող է հրաժարվել «Ավտովերակնքում» ծառայությունից ցանկացած օր 1 (մեկ) տարվա (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա) ընթացքում՝ ներկայացնելով դիմում Օպերատորի վաճառքի և սպասարկման սրահներից մեկում կամ «Հեռախոսային սպասարկում» ծառայության միջոցով: Եթե Բաժանորդը հրաժարվում է «Ավտովերակնքում» ծառայությունից ապա 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) անց, Բաժանորդային պայմանագիրը ավտոմատ կերպով չի վերակնքվում ևս 1 (մեկ) տարով (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրով), Բաժանորդի պայմանագիրը դառնում է անժամկետ և սկսում են գործել «Wi-Fly» և/կամ «All in» ծառայությունների/սակագնային փաթեթների անժամկետ բաժանորդագրության պայմանները:

4. «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելուց հետո Բաժանորդը ցանկացած օր կարող է կրկին դիմել «Ավտովերակնքում» ծառայությունը ակտիվացնելու համար՝ ներկայացնելով դիմում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահում կամ «Հեռախոսային սպասարկում» ծառայության միջոցով:

5. Եթե Բաժանորդը 1 (մեկ) տարվա (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա) ընթացքում չի ներկայացնում դիմում «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելու վերաբերյալ և Բաժանորդային պայմանագիրը ավտոմատ վերակնքվում է, ապա չեղարկել 1 տարի պարտադիր բաժանորդագրությունը հնարավոր չէ մինչև պարտադիր տարեկան բաժանորդագրության ժամկետի ավարտը (այսինքն՝ եթե պայմանագիրն արդեն ավտոմատ վերակնքվել է, այն չեղարկել հնարավոր չէ, սակայն Բաժանորդը կարող է հրաժարվել «Ավտովերակնքում» ծառայությունից սույն պայմանների 3 կետում նշված կարգով՝ հաջորդ ժամանակահատվածի համար):

6. Գործող բաժանորդը կարող է միանալ յուրաքանչյուր նոր հատուկ առաջարկի՝ վերակնքելով գործող պայմանագիրը՝ 1 տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով: Այս դեպքում, անկախ նրանից, արդյոք «Ավտովերակնքում» ծառայությունը ակտիվացված է եղել նախորդ տարեկան պայմանագրի շրջանակներում, թե՝ ոչ, վերակնքելով գործող պայմանագիրը, նախորդ տարեկան բաժանորդագրության շրջանակում ակտիվացված «Ավտովերակնքում» ծառայության ժամկետը ապաակտիվացվում է և նոր տարեկան բաժանորդագրության շրջանակում ակտիվանում է «Ավտովերակնքում» ծառայության նոր ժամկետ:

«All in տարեկան» և «Wi-Fly տարեկան» ծառայությունների/սակագնային փաթեթների բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված, երբ Բաժանորդն օգտվում է բաժանորդագրված ծառայությունների փաթեթից/սակագնային փաթեթից ներառված Ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած՝ առնվազն 1 տարվա (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա) ընթացքում:

Մինչև սահմանված ժամկետի ավարտը «All in տարեկան» և «Wi-Fly տարեկան» ծառայությունների/սակագնային փաթեթների բաժանորդագրության դադարեցման դեպքում՝ Բաժանորդի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված, վերջինս Օպերատորին ամբողջությամբ պարտավորվում է վճարել ընթացիկ պարտքը և հրաժարագին՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

Ֆիզիկական անձ հանդիսացող Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում: